



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Շինուհայր 3213,  
Մայրուղի թիվ 14  
Հեռ. (0284) 95530,  
Էլ. փոստ tatev.syuniq@mta.gov.am

**ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

N 105  
15 դեկտեմբեր 2016թ.


**ՎԱՅԵ ՀԱԿՈՒԹՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Հակոբյան

Ձեզ եմ ուղարկում ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 12-ի ավագանու թիվ 10 նիստի N 49-Ա, 50-Ն, 51-Ն, 52-Ա, 53-Ա, 54-Ա, 55-Ա, 56-Ա, 57-Ն և 58-Ն որոշումները:


Առդիր 52 թերթ


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՈՎԱՐ



ՄՈՒՐԱԴ ՄԻՄՈՆՅԱՆ

Կար. աշխարհակազմի քարտուղար՝  
Մ. Գերասիմյան 077-748-747





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 49-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի  
Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի  
առաջարկության համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի  
ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 09-ի նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի եվ վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի կողմից 2017 թվականի նմատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ, Հալիձոր եվ Տաթև բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունները քննարկելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի վարչական տարածքի հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ընդգրկվելու համար ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ առաջադրելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին
8. Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին
9. Հայաստանի Հանրապետության սյունիքի մարզի Տաթև համայնքի 2017 թվականի բյուջեի նախագիծը հաստատելու մասին


Կողմ - 8

Դեմ - 0


Ձեռնպահ - 0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ *Handwritten signature*
2. ԲԱՆՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ *Handwritten signature*
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ *Handwritten signature*
4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ *Handwritten signature*
5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ *Handwritten signature*
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ *Handwritten signature*
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ *Handwritten signature*
8. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՄԻԿ *Handwritten signature*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Այունիքի մարզ, գ. Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 50-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 18) կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7, 8, 9, 10, 11 հոդվածներով և համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության՝ համայնքի ավագանին **որոշում է**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Տաթև համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Տաթև համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Տաթև համայնքում 2017 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Տաթև համայնքում 2017 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4-ի:

ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների  
իրականացումը:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ *ԱԿԳ*

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ *ԶԵԲ*

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ *ԳՎՍ*

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ *ՍԵՎ*


5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ *ՄԱՐ*

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ *ԳՐԻ*

7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ *ՍԱՐ*

8. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ *ԳԵՍ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ




ՄՈՒՐԱԴ ՄԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքում սահմանվում է տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար.
2. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար.
3. համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.
4. համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար.
5. համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.
6. համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար.
7. համայնքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.
8. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար.
9. համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
10. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանուածախ առուվաճառքի թույլտվության համար.
11. համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
12. համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
13. համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.
14. համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար.
15. համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար.
16. համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար



*[Handwritten signature]*

Մ. Գերասիմյան

## ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

### հիմնական օբյեկտների համար՝

- 1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.
- 2) սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
  - ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.
  - բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.
  - գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.
  - դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ:

### ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

- 3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.
- 4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

- 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 հազար դրամ.
- 2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի «1.» կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

- 3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
- 1) ոգելից և ավկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ.
  - բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ.
  - գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ.
  - դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ.
  - ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ.
  - զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ.
- 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ.
  - բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ.
  - գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ.
  - դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ.
  - ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ.
  - զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:
5. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է տարեկան 50000 դրամ:
6. Համայնքի տարածքում
- 1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 150 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
- 2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 հազար դրամ.



3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ.

4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

**հիմնական շինությունների ներսում՝**

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ.

**ոչ հիմնական շինությունների ներսում՝**

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, գվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

2) հանրային սննդի և գվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ.

8. Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 2000 դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

- 1) ավոտոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.
  - 2) թունդ ավոտոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.
  - 3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
  - 4) Սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:
10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1քմ դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝ 250 դրամ.
  11. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքային բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ 100 դրամ այդ գովազդի մակերեսին համապատասխան:
  12. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 3000 դրամ:
  13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000 դրամ:
  14. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:
  15. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000 դրամ:
  16. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝
    - ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.
    - բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ.
    - գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ.
    - դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝



*(Handwritten signature)*


Մ. Գերասիմյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ.
2. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար.
4. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար.
5. շինարարական և խոշոր եգրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝




Մ. Գերասիմյան


**ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ**

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 20000 դրամ:
2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցվում է կատարված ծախսերի չափով:
3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանվում է՝ մասնակիցներից վճար 5000 դրամ:
4. Համայնքի տարածքում աղբահանություն կազմակերպելու և իրականացնելու համար աղբահանության վճար սահմանվում է՝
  - 1) կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ.
  - 2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ:
5. Համայնքի տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 դրամ:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝



Մ. Գերասիմյան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syunik@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 51-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 19) կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին **որոշում է**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի կողմից 2017 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

*Handwritten signatures and initials*

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

8. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ




ՄՈՒՐԱԴ ՄԻՄՈՆՅԱՆ


**ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ**  
**2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ**

1. Համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատություններ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2017 թվականի համար սահմանվում է երկու հազար դրամ:
2. Համայնքային ենթակայության «Շինուհայրի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2017 թվականի համար սահմանվում է երկու հազար դրամ:
3. Համայնքային ենթակայության մշակույթի տների դահլիճների վարձակալական վճարի չափ սահմանվում է՝ մանկական միջոցառումների համար քսան հազար դրամ, բարեգործական միջոցառումների համար զրո դրամ, այլ միջոցառումների համար երեսուն հազար դրամ:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝



Մ.Գերասիմյան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 52-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՏ, ՀԱԼԻՁՈՐ ԵՎ ՏԱԹԵՎ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐՈՒՄ  
ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հողային օրենսգրքի 18-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1918-Ն որոշմանն համաձայն Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին **որոշում է**

1. Հավանությունտալ«Սյունիքիմարզի Տաթև համայնքի Խոտ, Հալիձոր և Տաթև բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխություններին, ըստ որի առաջարկվում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողերից 0,06 հեկտար /3 միավոր/ այլ հողատեսք /կադաստրային ծածկագրեր՝ 09-097-0318-0005-ից, 09-054-0129-0045-ից, 09-046-0106-0005-ից/ փոխադրել Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և



կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կապի օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ՝ բջջային կապի կայանների շահագործման համար:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ *[Signature]*

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ *[Signature]*

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ *[Signature]*

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ *[Signature]*


5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ *[Signature]*

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ *[Signature]*

7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ *[Signature]*

8. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ





ՄՈՒՐԱԴ ՄԻՄՈՆՅԱՆ

**ՄԱՆԵՄԱ**

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնք գյուղ-Քաղվիճուր գյուղատնտեսական կազմակերպության գյուղատնտեսական խումբի կառուցվածքի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հորիզոնական հատվածի վիճակագրական նկարագրիչը 0.0300 հա հողատեսակի  
Մ1:5000

Ս. Կիրոսյան



| Ընթացիկ համար | Կոորդինատներ | 0.0300       |   | Սզվեցող քվե |
|---------------|--------------|--------------|---|-------------|
|               |              | X            | Y |             |
| 1             | 8609595.2718 | 4363525.0590 |   | 20.00       |
| 2             | 8609613.5481 | 4363533.1818 |   | 15.00       |
| 3             | 8609619.6402 | 4363519.4748 |   | 20.00       |
| 4             | 8609601.3639 | 4363511.3519 |   | 15.00       |
| 5             | 8609595.2718 | 4363525.0590 |   |             |

Կատարող

Օրավարձը՝ 44000000

Իրավաբանական անձի

Միջոցառման

մուտքագրման

26.02.2014

Մարզում, տնտեսական

համայնքի 02/Մ. 03/0

մեկնում է

Մ. Կիրոսյան

0313

համայնք

88110602814

գնահատված գնահատման համար

Հ.Ս.

26.02.2014



Մարզում, տնտեսական

մեկնում է

*(Signature)*

Ման:ՄԱ  
 22 Մյուսիսի մարզի Տաթև համայնք գյուղ խոտ Գյուղատնտեսական/այլ գյուղ, խոտ/ը  
 ենթոցետիկայի կապի, սրբապատրոսի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա  
 փոխարկվող 0,01 հա խոտավայր  
 Ս1:5000


Մ.Արմենյան



| Ծրագրի համար | Կետեր | Կոորդինատներ |              | Սզվիտի քառակուսի |
|--------------|-------|--------------|--------------|------------------|
|              |       | X            | Y            |                  |
| 1            |       | 8617546.7014 | 4367843.3180 | 10.00            |
| 2            |       | 8617548.7942 | 4367853.0966 | 10.00            |
| 3            |       | 8617558.5728 | 4367851.0038 | 10.00            |
| 4            |       | 8617556.4800 | 4367841.2252 | 10.00            |
| 5            |       | 8617546.7014 | 4367843.3180 |                  |

Կատարող  
 Որակավորման վկայականի  
 Իրավաբանական անձի

Միջազգային  
 26.02.2014  
 Հաստատող  
 88110802814  
 Կատարող



ՍԽԵՄԱ



22 Սյունիքի մարզի Տաթև համայնք գյուղ Տառն գյուղատնտեսական(այլ հողատեսք/  
ենթեզեղեղիկայի կամի տրասպորտի և կրմուռալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կառուցողի  
փոխարկելով 0.02 հա հարվանաթ  
ՍՄ-5000

Ս.Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՍ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

համայնքի ղեկավար



0.02 հա

| Ընթաց<br>ընթաց | Կտրուկ<br>կտրուկ | Կտրուկի մասեր |       | Մզված<br>մզված |
|----------------|------------------|---------------|-------|----------------|
|                |                  | X             | Y     |                |
| 1              | 8606086.9447     | 4361138.6795  | 20.00 |                |
| 2              | 8606086.9447     | 4361158.6795  | 10.00 |                |
| 3              | 8606096.9447     | 4361158.6795  | 20.00 |                |
| 4              | 8606096.9447     | 4361138.6795  | 10.00 |                |
| 5              | 8606086.9447     | 4361138.6795  |       |                |



Սյունիքի մարզի

Տաթև համայնք

26.07.2014

Ս.Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

0313

համայնք

88110802814

Կառուցված օբյեկտի համար

Կառուցված

Օբյեկտի մասնակցի

Կառուցված օբյեկտի



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 53-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1918-Ն որոշման և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 21-ի N85 եզրակացության և համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին **որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր և Հարժիս բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում, համաձայն հավելվածի, համայնքային սեփականություն հանդիսացող.

- 1) գյուղատնտեսական նշանակության հողերից 0,0455 հեկտար այլ հողատեսք.
- 2) ջրային նպատակային նշանակության «հիդրոտեխնիկական կառույցներ» գործառնական նշանակության հողերից 0,0099 հեկտար.

փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ՝ ջրամատակարարման օբյեկտների շահագործման համար:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ *AK*

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ *BA*

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ *GA*

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ *GA*

5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ *GA*


6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ *KA*

7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ *KA*

8. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ *KA*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԵՆԿԱԾ  
 ՀՀ ԱՅՐՈՒՄՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ  
 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՍՏԻ 2016թ.  
 ԼՈՅՆԱԲԵՐԻ N 53 Ա ՈՐՈՇՄԱՆ


Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների  
 օբյեկտների հողերի շարքը փոխադրվող 0.0554 հա

Տրայիև-0.0099հա  
 գյուղատնտեսական-0.0055հա

| Կետ<br>ի հ/հ | Y            | X            | Հեռակո-<br>րույրուն<br>(մետր) |
|--------------|--------------|--------------|-------------------------------|
| 1            | 8606172.0065 | 4368294.9915 | 9.90                          |
| 2            | 8606179.0065 | 4368301.9915 | 9.90                          |
| 3            | 8606186.0065 | 4368294.9915 | 9.90                          |
| 4            | 8606179.0065 | 4368287.9915 | 9.90                          |
| 1            | 8606172.0065 | 4368294.9915 |                               |

գյուղատնտեսական-0.04հա

| Կետ<br>ի հ/հ | Y            | X            | Հեռակո-<br>րույրուն<br>(մետր) |
|--------------|--------------|--------------|-------------------------------|
| 1            | 8612676.6291 | 4367500.4996 | 20.00                         |
| 2            | 8612682.4264 | 4367519.6410 | 20.00                         |
| 3            | 8612701.5677 | 4367513.8437 | 20.00                         |
| 4            | 8612695.7705 | 4367494.7023 | 20.00                         |
| 1            | 8612676.6291 | 4367500.4996 |                               |

Աշխատակազմի թարտուղար 



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 54-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՔԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ և 26-րդ կետերի դրույթներով և համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին **որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի վարձատրությունը՝ պաշտոնային դրույքաչափը սահմանել ամսական 295.000 ՀՀ դրամ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական և հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի համայնքային ծառայության պաշտոնների մասով 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարին՝ եռօրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու նպատակով:



Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ *ԿԻԳ*

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ *ԳԵՎ*

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ *ԱՐԱՄ*

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ *ՍԵՎԱԿ*


5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ *ՄԱՐՏԻՆ*

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ *ԳՐԻԳՈՐ*

7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ *ՍԱՐԳԻՍ*

8. ՄԱԹԵՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ *ԳԵՍԻԿ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ




ՄՈՒՐԱԴ ՄԻՄՈՆՅԱՆ

**"ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ" ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 58

| Հ/Հ  | Պաշտոնի անվանումը<br>(համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝<br>ծածկագիրը)     | Հաստիքների<br>քանակը | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ<br>ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ<br>ԴՐՈՒՅՔԱԶՎՓԸ<br>(ՀՀ դրամ) |
|--|---|----------------------|-----------------------|--|
| <b>ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ</b>  |   |                      |                       |  |
| 1  | Համայնքի ղեկավար  | 1                    | 1                     | 295000                                 |
| 2  | Համայնքի ղեկավարի տեղակալ   | 1                    | 1                     | 207000                                 |
| 3  | Վարչական ներկայացուցիչ/Տաթև, Խոտ, Հարժիս և Հալիձոր<br>քնակավայրերում/                 | 4                    | 1                     | 160000                                 |
| 4  | Վարչական ներկայացուցիչ/Սվարանց և Տանձատափ<br>քնակավայրերում                           | 2                    | 1                     | 135000                                 |
| <b>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ</b>   |   |                      |                       |  |
| 5  | Աշխատակազմի քարտուղար (1.2-1)   | 1                    | 1                     | 222000                                 |
| 6  | Գլխավոր մասնագետ-(2.1-1)  | 1                    | 1                     | 175000                                 |
| 7  | Գլխավոր մասնագետ- (2.2-1)   | 1                    | 1                     | 165000                                 |
| 8  | Առաջատար մասնագետ- հաշվապահ (3.1-1)   | 1                    | 1                     | 155000                                 |
| 9  | Առաջատար մասնագետ- (3.1-2)  | 1                    | 1                     | 155000                                 |
| 10   | Առաջին կարգի մասնագետ (3.2-2)   | 1                    | 1                     | 140000                                 |
| 11   | Երկրորդ կարգի մասնագետ (3.3-1)  | 1                    | 1                     | 125000                                 |
| 12   | Երկրորդ կարգի մասնագետ (3.3-3)  | 1                    | 1                     | 125000                                 |
| 13   | Երկրորդ կարգի մասնագետ (3.3-4)  | 1                    | 1                     | 125000                                 |
| <b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ<br/>ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ</b> |   |                      |                       |  |
| 14   | Գրադարանավար/Շինուհայր գյուղում/  | 1                    | 1                     | 80000                                  |
| 15   | Գրադարանավար /Խոտ, Հալիձոր, Տաթև, Հարժիս և<br>Սվարանց գյուղերում/                     | 5                    | 0.5                   | 96000                                  |
| 16   | Մշակույթի տան աշխատող/Շինուհայր գյուղում/   | 1                    | 1                     | 80000                                  |
| 17   | Մշակույթի տան աշխատող/Մնացած բոլոր 7 գյուղերում/                                      | 7                    | 0.5                   | 96000                                  |
| 18   | Օպերատոր վարչական նստավայրում   | 5                    | 1                     | 102000                                 |
| 19   | Գործավար/Տաթևի համայնքապետարանում/  | 1                    | 1                     | 102000                                 |
| 20   | Վարորդ  | 1                    | 1                     | 101000                                 |
| 21   | Հավաքարար/Տաթևի համայնքապետարանում/   | 1                    | 1                     | 85000                                  |
| 22   | Հավաքարար /Խոտ, Հալիձոր, Տաթև և Հարժիս գյուղերում/                                    | 4                    | 0.5                   | 96000                                  |
| 23   | Համակարգչային օպերատոր/Տաթևի համայնքապետարանում/                                      | 1                    | 1                     | 110000                                 |
| 24   | Օժանդակ բանվոր/Շինուհայր գյուղում/  | 4                    | 1                     | 90000                                  |
| 25   | Օժանդակ բանվոր/Խոտ, Հալիձոր, Տաթև, Հարժիս,<br>Տանձատափ, Քաշունի և Սվարանց գյուղերում/ | 7                    | 1                     | 72800                                  |
| 26   | Օժանդակ բանվոր/Տաթև և Խոտ գյուղերում/   | 2                    | 0.5                   | 96000                                  |

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավար՝





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syunig@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀՍՍԱՐ ՀՀ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 85-Ա որոշմամբ, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյանի 21.11.2016թ. թիվ 03/03/1/5353-16 գրությունը և համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին *որոշում է*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ընդգրկվելու համար ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ առաջադրել ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր գյուղի բնակիչ Հարությունյանին Հարությունյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ *ԺԽ*

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ *ԳԵ*

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ *ԳՄ*

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ *ՍԵ*

5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ *ՄՐ*

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ *ԳՐ*

7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ *ՍՐ*

8. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ *ԳԵ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ




ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ 22 ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱՐԻՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ


ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Ռ. Սարգսյանի 21.11.2016թ. թիվ 03/03/1/5353-16 գրավոր դիմել է ՀՀ Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներին, հայտնելով, որ տեղական ինքնակառավարման նոր մարմինների ձևավորմամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել վերանայելու ՀՀ Սյունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անհատական կազմը: Երիտասարդական խորհրդի անհատական կազմում համապատասխան փոփոխություններ կատարելու համար, ՀՀ Սյունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրության 7-11 կետերի պահանջներին հապատասխան, խնդրել է հնարավորինս սեղմ ժամկետում տալ խորհրդի պետական և ոչ պետական հատվածները ներկայացնող 1-ական անձի թեկնածություն:

ՀՀ Սյունիքի Տաթև համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 85-Ա որոշմամբ պահանջների կատարումն ապահովելու նպատակով, այն է՝ Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ընդգրկվում են տվյալ մարզի բոլոր քաղաքային, ինչպես նաև 3500 և ավելի բնակիչ ունեցող համայնքների երկուական ներկայացուցիչ որոնցից մեկը ներկայացնում է պետական հատվածը ներկայացնող անդամը համայնքի ղեկավարի տեղակալն է, իսկ այդ հաստիքի բացակայության դեպքում համապատասխան համայնքի աշխատակազմի ղեկավարը, եթե նրանց տարիքը չի գերազանցում 35 տարեկանը: Այդ դեպքում պետական հատվածը ներկայացնում է համայնքի աշխատակազմի 21-35 տարեկան աշխատակիցը: Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը 16-30 տարեկան երիտասարդ է, որը համապատասխանում է հետևյալ չափանիշներին՝ երիտասարդներին առըջվող կրթական, սոցիալական, զբաղվածության առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետել երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ, երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փոփոխ, պետական և հանրային կառավարման հատկապես, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն: Նշված չափանիշները բավարարող թեկնածու չլինելու դեպքում խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը կարող է առաջադրվել համայնքի ավագանու կազմից՝ ինքնաառաջադրման սկզբունքով, սույն կանոնադրության 8-րդ կետին համապատասխան չափանիշներով: Համապատասխան թեկնածու չլինելու դեպքում տվյալ համայնքից խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ է ընտրվում ավագանու տարիքով ամենաերիտասարդ անդամը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՎԱՐ



ՍՈՒՐԱՂ ՄԻՄՈՆՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syunig@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 56-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշմամբ և համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին

**որոշում է**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ *AdK*

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ *GeV*

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ *ArA*

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ *SeV*


5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ *MarT*

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ *GrG*

7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ *SarS*

8. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ *GeS*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ**




**ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ**


ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Սյունիքի մարզի Տաթև համայնքի  
ավագանու 2016 թվականի  
դեկտեմբերի 12-ի N 56-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Արթուր Հովհաննիսյան - Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի  
երկրորդ կարգի մասնագետ /սոցիալական աշխատող/ /հանձնաժողովի նախագահ/
2. Հասմիկ Ղազարյան - Տաթևի համայնքապետարանի գործավար
3. Անահիտ Վանյան - Շինուհայրի «Առողջության առաջնային պահպանման  
կենտրոն» ՊՈԱԿ-ի ընտանեկան բուժքույր
4. Սեյրան Հովհաննիսյան - Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի  
առաջին կարգի մասնագետ
5. Սարգիս Հայրապետյան-Տաթև համայնքի ավագանու անդամ:

Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի  
քարտուղար՝  Մ. Գերասիմյան





**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու նպատակով, այն է՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են: Խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, որոնց անհատական կազմը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:

Իսկ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշման համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, որը խորհրդակցման մարմին է և գործում է հասարակական հիմունքներով:

Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչև ինն անձ: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն:

Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում է նաև հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար:

Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տալիսըքային գործակալությունների աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍՈՒՐԱԴ ՄԻՍՈՆՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syunig@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 57-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տաթևյան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 62-րդ և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով և համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին **որոշում է**

1. Տաթև համայնքի 2016թ-ի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից/հոդված 4891/ հատկացնել՝

1.1. <<Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում>>/բաժին 01, խումբ 01, դաս 01/, հոդված -4232-20.000/քսան հազար/ դրամ, հոդված 4234-40000/քառասուն հազար/ դրամ, հոդված 4252-150000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ

1.2<<Սոցալական բնույթի հանրային ծառայություններ>>/բաժին 10, խումբ 07, դաս 01/, հոդված 4729- 100.000/մեկ հարյուր հազար/ դրամ

1.3<<Նախադպրոցական կրթություն>> /բաժին 09, խումբ 01, դաս 01/ հոդված 4511- 800.000/ութ հարյուր հազար/ դրամ

1.4<<Տարրական ընդհանուր կրթություն/երաժշտական դպրոց/>> /բաժին 09, խումբ 01, դաս 02/, հոդված 4511- 900.000/իննը հարյուր հազար/ դրամ

1.5<<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)>> /բաժին 01, խումբ 06, դաս 01/, հոդված 4269-800.0/ութ հարյուր հազար/ դրամ

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ *Դեմ*

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ *Ըջ*

3. ԳԱԼՍՅԱՆ ԱՐԱՄ *ԳԻ*

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ *Ըջ*

5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ *Ըջ*

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ *Ըջ*


7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ *Ըջ*

8. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ *Ըջ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ըջ*



ՄՈՒՐԱԴ ՄԻՄՈՆՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syunig@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 58-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-իին մասի 3) կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2017 թվականի բյուջեի նախագիծը՝ համաձայն կից հավելվածի

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԳԱԼՍՅԱՆ ԱՐԱՄ

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ


6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ



7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

8. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՂՎԱՐ**



**ՄՈՒՐԱԴ ՄԻՄՈՆՅԱՆ**

ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

